


Խոստղ ձուկը



Exported from Wikisource on 08/05/20

Խոսող

ձուկը

← [Կացին
ախպեր](#)

[Հովհաննես
Թումանյան](#)

[Խելոքն
ու
հիմարը](#)

[[186](#)]

1908

ԽՈՍՈՂ ԶՈՒԿԸ

1

Լինում է, չի լինում՝ մի աղքատ մարդ: Էս աղքատ մարդը զնում է դառնում մի ձկնորսի շալակատար: Օրական մի քանի ձուկն է աշխատում, տուն բերում, նրանով ապրում են ինքն ու կնիկը:

Մի անգամ էլ ձկնորսը մի սիրուն ձուկն է բռնում, տալիս իր շալակատարին, որ պահի, ինքն էլ ես շուրն է մտնում: Էս շալակատարը գետափին նստած՝ նայում է, նայում էս սիրուն ձկանն ու միտք է անում:

- Տե՛ր աստված,- ասում է,-սա էլ, որ մեզ նման շունչ-կենդանի է, դու ասա՝ սա՝ էլ մեզ նման ծնող ունի, ընկեր ունի, աշխարհքից քան է հասկանում, ուրախություն կամ ցավ է զգում, թե՛ չէ . . .

Հենց էս մտածելու ժամանակ ձուկը լեզու է առնում:

- Լսի', - ասում է,-մարդ-ախապեր: Ընկերներիս հետ ես խաղում էի գետի ալիքների մեջ: Ուրախությունից ինձ մոռացա ու անզգոյց ընկա ձկնորսի ուուկանը: Ճիմի, ո'վ գիտի, իմ ծնողը ինձ որոնում է ու լաց է լինում, իիմի ընկերնեիս տիսրել են: Ես Էլ, տեսնում ես, ինչպես եմ տանջվում, շունչու կտրում է շրից դուրս: Ուզում եմ Էլ ետ գնամ ապրեմ ու խաղ անեմ նրանց հետ էն պաղ ու պարզ շրերում: Էնպես ես ուզո՞ւմ, էնպես եմ ուզո՞ւմ . . . Եկ, խեղճ արի, ազատ արա ինձ, բա՛ց թող, բա՛ց թող գնամ . . .

Էսպես Էր ասում ցա՛ծ, շա՛տ ցած ձենով, ցամաքած քերանը բացուխուփ ալովիվ:¹⁸⁷ Ես շալակատարի մեղքը գալիս է, առնում է, ետ զցում գետը:

- Գնա՛, սիրուն ձկնիկ, թող լաց չլինի քու ծնողը: Թող չտիսրեն քու ընկերները: Գնա՛, ապրի՛ ու խա՛ղ արա նրանց հետ:

Ձկնորսը սաստիկ բարկանում է շալակատարի վրա:

- Տո՛, ախմախ,- ասում է,- ես էստեղ շրի մեջ թրջվելով ձուկն եմ բռնում, դու իմ աշխատանքն առնում ես Էլ ետ շուրը զցո՞ւմ . . . Դե գնա՛ կորի՛, Էլ իմ աշքին չերևա՛ս, Էլ իմ շալակատարը չես ես օրից, գնա՛, սովից մեռի՛:

Ձեռի տոպրակն էլ խլում է ու ճամփու դնում:

- Ճիմի ես ո՞ւր գնամ, ի՞նչ անեմ, ո՞նց ապրեմ . . . - տարակուսած մտածելով, դառն ու դատարկ վերադառնում է աղքատը դեպի տուն:

Ես տիսուր մտածմունքի ժամանակ ճամփին դեմք դուրս է զալի մի մարդակերպ Հրեշ՝ առաջը մի գեղեցիկ կով:

{ {Կենտրոն|2} }

- Բարի օր, ախաղերացու, Եղ ի՞նչ ես մոլորել, ի՞նչ ես միտք անում,- հարցնում է Հրեշը:

Աղքատը պատմում է իր գլխին եկածը, թե ինչպես՝ հիմի մնացել է անգործ, անձար ու չի իմանում, թե ոնց պետք է ապրեն ինքն ու իր կնիկը:

- Լսի՛, բարեկամ,-ասում է Հրեշը:-
Ես կարնատու կովը ես քեզ կտամ երեք տարվան ժամանակով: Ամեն օր էնքան կաթը տա, որ քու կնիկն ու դու կուշտ-կուշտ ուտեք, ապրեք: Երեք տարին լրացավ թե չէ՝ հենց էն զիշերը կգամ ձեզ հարց կտամ: Թե հարցիս պատասխանեցիք՝ իմ կովը ձեզ լինի, թե չէ՝ երկուսդ էլ իմն եք, տանելու եմ, ինչ ուզեմ, կանեմ: Համաձայն ե՞ս:

- Մի բան, որ առանց էն էլ սովից մեռնելու ենք,- մտածում է աղքատը,- կովը կտանեմ, ես երեք տարին կապրենք, մինչև երեք տարվա լրանալն էլ [188](#) ևսպած ողորմած է: Մի տեղից մի դուռը կբացվի, կամ գուցե հենց պատասխանը տալիս ենք, ո՞վ զիտի . . .

-Համաձայն եմ,- ասում է ու կովն առաջն անում, տանում տուն:

Երեք տարի կթում են, լիովի ուսում, ապրում: Չեն էլ նկատում, թե ինչպես անցավ երեք տարին, և ահա հասնում է նշանակած օրը, որ Հրեշն էն գիշեր պիտի զա:

Մարդ ու կնիկ վերջալուսի տակ տխուր նստում են դռանը, ու միտք են անում, թե ինչ պատասխան տան Հրեշին, կամ, ով գիտի, ինչ կհարցնի նա . ո՞վ կիմանա Հրեշի միտքը:

- Այ թե ինչ դուրս կգա, երբ մարդ Հրեշի հետ գործ քոնի . . . Հրեշի հետ հաշիվ ունենա . . . Հրեշից լավություն ընդունի . . . - հառաչելով զղում էին մարդ ու կին, բայց անցկացածն անց էր կացել, էլ հնար չկար: Իսկ զարհութելի գիշերը արդեն վրա էր հասնում:

Ես ժամանակ նրանց մոտենում է մի անձանոթ գեղեցիկ երիտասարդ:

- Բարի իրիկո՛ւն,- ասում է,- ճամփորդ մարդ եմ, մութն ընկնում է, ես էլ հոգնած եմ, հյուր չե՞ք ընդունի ձեր տանն էս գիշեր:

- Ընչի՛ չե, ճամփորդ ախապեր, հյուրն աստծունն է: Բայց մեզ մոտ վտանգավոր է էս գիշեր: Մենք Հրեշից մի կով ենք առել էն պայմանով, որ երեք տարի կթենք, ուտենք, երեք տարուց ետք զա մեզ հարց տա, թե պատասխանենք, կովը մեզ լինի, թե չե՞ իր գերին ենք: Հիմի ժամանակը լրացել է. էս գիշեր պիտի զա, ու մենք էլ չգիտենք, թե ինչ պատասխան տանք: Հիմի մեզ ինչ անի՛ մենք ենք մեղավոր, վայ թե քեզ էլ վճասի:

- Բան չկա, որտեղ դուք, Էնտեղ էլ ես,- պատասխանում է օտարականը:

Համաձայնում են, հյուրը մնում է:

Մին էլ կեսզիշերին դուռը դդրդում է:

[[189](#)] Ո՞վ է: - Ճրեշը: Եկել եմ որ Եկել եմ,
դե պատասխանս տվեք:

Ինչ պատասխան, սարսափից մարդ
ու կնկա լեզուն կապվում է, մնում են
տեղները քարացած:

-Մի՛ վախենաք, ես ձեր տեղակ սրա
պատասխանը կտամ,- ասում է
երիտասարդ հյուրը ու գնում է դեպի
դուռը:

- Եկե՛լ եմ,- դուն ետևից ձայն է
տալի Ճրեշը:

- Ես էլ եմ Եկե՛լ,- պատասխանում Ե
ներսից հյուրը:

- Ո՞րտեղից ես Եկել:

- Ծովի էն ափից:

- Ընչո՞վ ես Եկել:

- Կադ մոծակը թամբել եմ, վրեն
նստել եմ, Եկել:

- Ուրեմն՝ ծովը պստիկ է Եղել:

- Ի՞նչ պստիկ, արծիվը չի կարող մի
ափից մյուսը քոչի:

- Ուրեմն՝ արծիվը ճուտ Ե Եղել:

- Ի՞նչ ճուտ . թևերի շվաքը քաղաք Ե
ծածկում:

- Ուրեմն՝ քաղաքը շատ է փոքրիկ:

- Ի՞նչ փոքրիկ . նապաստակը մի ժայրից մյուսը չի հասնի:

- Ուրեմն՝ նապաստակը ձագ է:

- Ի՞նչ ձագ . մորթին մի մարդու քուրք դուրս կգա, զլխարկն ու տրեխն էլ՝ ավել:

- Ուրեմն՝ մարդը թզուկ է:

- Ի՞նչ թզուկ . ծնկան ծերին աքլորք ծուղրուղու կանչի, ձենք ականջը չի հասնիլ:

- Ուրեմն՝ խոլ է:

- Ի՞նչ խոլ . սարում որ պախրեն խոտ պոկի, նա կլսի:

Հրեշը մնում է կապված–մոլորված, զգում է, որ ներսը մի ուժ կա իմաստուն, համարձակ, անհաղթելի, ել չի իմանում՝ ինչ ասի, սուսուփուս քաշվում, կորչում է զիշերվա խավարի մեջ:

Սրանք նոր մեռած տեղներիցը ետ են զալի, ուրախանում, աշխարհովով մին են լինում: Ճետն էլ բացվում է բարի լուսը, և երիտասարդ հյուրը վեր է կենում, մնաք բարով է ասում, որ զնա իր ճանապարհը:

- Չենք թողնի որ չենք թողնի,- առաջը կարմում են մարդ ու կին,- դու, որ փրկեցիր մեր կյանքը, ասա՛, ինչով ետ վճարենք քո լավությունը . . .

- Չե՛, անկարելի քան է, պետք է զնամ իմ ճանապարհը:

- Դե զոնե անունդ ասա, եթե լավությունդ կորչի, ու չկարողանանք ետ վճարել, զոնե իմանանք, թե ում ենք օրինելու . . .

- Լավությունը արա ու թեկուզ ջուրը զցի՝ չի կորչիլ: Ես հենց էն Խոսող ձուկն եմ, որի կյանքը դու խնայեցիր . . . - ասում է անծանոթն ու չքանում ապշած մարդ ու կնկա աշքերից:

Արտարին հղումներ

- [«Խոսող ձուկ» խոսող գիրք](#)

About this digital edition

This e-book comes from the online library [Wikisource](#)^[1]. This multilingual digital library, built by volunteers, is committed to developing a free accessible collection of publications of every kind: novels, poems, magazines, letters...

We distribute our books for free, starting from works not copyrighted or published under a free license. You are free to use our e-books for any purpose (including commercial exploitation), under the terms of the [Creative Commons Attribution-ShareAlike 3.0 Unported](#)^[2] license or, at your choice, those of the [GNU FDL](#)^[3].

Wikisource is constantly looking for new members. During the realization of this book, it's possible that we made some errors. You can report them at [this page](#)^[4].

The following users contributed to this book:

- 71.174.127.189
- Վազգեն
- 204.52.215.21
- Teak
- GeoO
- Uuhwul

1. [↑ http://wikisource.org](http://wikisource.org)

2. [↑ http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0](http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0)

3. [↑ http://www.gnu.org/copyleft/fdl.html](http://www.gnu.org/copyleft/fdl.html)

4. [↑ http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium](http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium)